

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Մինչև ե՞րբ է գոյատևել Տաշիր-Չորագետի թագավորությունը.

- 1) 1131 թ.
- 2) 1021 թ.
- 3) 1001 թ.
- 4) 1113 թ.

2 Ե՞րբ է ստեղծվել Նոր Ջուղայի հայկական տպարանը.

- 1) 1568 թ.
- 2) 1638 թ.
- 3) 1618 թ.
- 4) 1616 թ.

3 Հայ ավանդական երեք կուսակցություններն առաջին անգամ համագգային կենտրոնական մարմին կազմեցին

- 1) 1974 թ.
- 2) 1975 թ.
- 3) 1988 թ.
- 4) 1987 թ.

4 Արևմտահայերի երկրորդ համագումարը տեղի է ունեցել՝

- 1) 1917 թ. մայիսի 2-11-ին
- 2) 1918 թ. հուլիսի 22-26-ին
- 3) 1919 թ. փետրվարի 6-13-ին
- 4) 1917 թ. հոկտեմբերի 29-ին

5 Ո՞ր թվականին Արգիշտի I-ի գորքերը հասան մինչև Պարսուա և Բաբելոնի երկիր.

- 1) Ք. ա. 784 թ.
- 2) Ք. ա. 779 թ.
- 3) Ք. ա. 782 թ.
- 4) Ք. ա. 781 թ.

6 Տիգրան Մեծի գլխավորած հայկական բանակը ե՞րբ մոտեցավ պաշարված Տիգրանակերտին.

- 1) Ք. ա. 68 թ. հոկտեմբերին
- 2) Ք. ա. 68 թ. սեպտեմբերին
- 3) Ք. ա. 69 թ. սեպտեմբերին
- 4) Ք. ա. 69 թ. հոկտեմբերին

7 Ե՞րբ է ստեղծվել Կ. Պոլսի Ազգային ժողովը.

- 1) 1859 թ.
- 2) 1846 թ.
- 3) 1857 թ.
- 4) 1844 թ.

8 Ե՞րբ է կայացել Հայոց ազգային համախորհրդակցությունը Թիֆլիսում.

- 1) 1917 թ. սեպտեմբերի 29–ից հոկտեմբերի 13–ը
- 2) 1917 թ. սեպտեմբերի 25–ից հոկտեմբերի 3–ը
- 3) 1917 թ. սեպտեմբերի 29–ից հոկտեմբերի 6–ը
- 4) 1917 թ. մայիսի 2–11–ը

9 Ավատատիրական Հայաստանում յուրաքանչյուր նախարարի տեղը արքունիքում ո՞ր պետական կարևոր փաստաթղթով էր սահմանվում.

- 1) գահնամակով
- 2) գորանամակով
- 3) դատաստանագրքով
- 4) աշխարհագրով

10 Հայաստանի ո՞ր տարածքն էր որդան կարմիր հոջակավոր ներկի արտադրության կենտրոնը.

- 1) Կարսն իր շրջակայքով
- 2) Դվինն իր շրջակայքով
- 3) Անին իր շրջակայքով
- 4) Վանն իր շրջակայքով

11 Ո՞վ է եղել Կ. Պոլսի թատերական երկրորդ կազմակերպության ղեկավարը.

- 1) Հ. Աբելյանը
- 2) Պ. Ադամյանը
- 3) Լ. Քալանթարը
- 4) Հ. Վարդովյանը

12 Որքա՞ն զինվոր է կորցրել թուրքական բանակը 1724 թ. Երևանի պաշտպանության ժամանակ.

- 1) 15 հազար
- 2) 10 հազար
- 3) 5 հազար
- 4) 20 հազար

13 Որքա՞ն էր Մեծ Հայքի տարածքը.

- 1) 80 հազ. քառ. կմ
- 2) 250 հազ. քառ. կմ
- 3) 311 հազ. քառ. կմ
- 4) 411 հազ. քառ. կմ

14 Որքա՞ն էր Անտոնիոսի բանակի ընդհանուր կորուստը պարթևական արշավանքում.

- 1) 30 հազար զինվոր
- 2) 20 հազար զինվոր
- 3) 44 հազար զինվոր
- 4) 55 հազար զինվոր

15 Ո՞վ է Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին հայ հերոսը.

- 1) Կարապետ Սիմոնյանը
- 2) Հովհաննես Բաղրամյանը
- 3) Լազր Չափչախյանը
- 4) Նելսոն Ստեփանյանը

16 Ալեքսանդր Թամանյանի նախագծով կառուցվել է՝

- 1) «Հրազդան» մարզադաշտը
- 2) Սասունցի Դավթի արձանը
- 3) օպերայի և ֆալետի թատրոնը
- 4) մարզահամերգային համալիրը

17 Հայոց ո՞ր սպարապետն է ասել հետևյալ խոսքերը.

«Իմ այնքան ծառայությունների, արյուն ու քրտինք թափելու... հատուցումն ա՞յս էրա՞վ: Բայց այս մահը երանի՜ թե ձիու վրա ինձ հասներ»:

- 1) Վասակ Մամիկոնյան
- 2) Մուշեղ Մամիկոնյան
- 3) Մանվել Մամիկոնյան
- 4) Վահան Մամիկոնյան

18 **Ո՞վ է ստորև բերվող վկայության հեղինակը.**

«Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ [գետերը] խառնվում են, և այնտեղ, բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ»:

- 1) Պլուտարքոսը
- 2) Պոլիբիոսը
- 3) Խորենացին
- 4) Ստրաբոնը

19 **Ի՞նչ է նշանակում ամիրսպասալար.**

- 1) թագաժառանգի խնամակալ
- 2) հեծելազորի հրամանատար
- 3) արքունի կավվածքների կառավարիչ
- 4) սպարապետ

20 **Ի՞նչ է հեղկումը.**

- 1) իշխանության տեղական, ժամանակավոր, նշանակովի գործադիր մարմին
- 2) երիտասարդական հասարակական կազմակերպություն
- 3) իշխանության ընտրովի օրենսդիր մարմին
- 4) քաղաքական կուսակցություն

21 **Ի՞նչ նպատակով էր Արտաշես I-ը հրապարակել հողային բարեփոխման վերաբերյալ իր հրամանագիրը.**

- 1) Ամրապնդում էր իր քաղաքական հենարանի՝ հողային խոշոր սեփականատերերի հետ դաշինքը և վերջնականապես զրկում էր գյուղացիներին իրենց գոյությունը պահպանելու միակ միջոցից:
- 2) Ստիպելով ազարակատերերին վերադարձնել զավթած հողերը՝ հանդես էր գալիս որպես գյուղացիության պաշտպան և կանխում էր գյուղացիության հողազրկումը:
- 3) Թույլ էր տալիս շարունակել համայնքային հողերի յուրացումը, որովհետև զգուշանում էր խոշոր հողատերերի միահամուռ ապստամբությունից:
- 4) Մի կողմից օրինականացնում էր ազարակատերերի մինչ այդ կատարած զավթումները, իսկ մյուս կողմից պահպանում էր համայնքային սեփականությունը:

22

Ի՞նչ արդյունք ունեցավ XVIII դարի առաջին երեսնամյակի ազատագրական պայքարն Արցախում և Սյունիքում.

- 1) Կանխվեց վրաց բանակի կողմից Արարատյան դաշտի հայկական գյուղերի բնակչության կողոպուտն ու հնարավոր արյունահեղությունը:
- 2) Հասարակության տարբեր խավեր համախմբվեցին, և մարտական շունչ հաղորդվեց քաղաքական կուսակցություններին:
- 3) Ստեղծվեցին նախադրյալներ Հայաստանի ազատագրության գործում Արևմուտքի օժանդակությունը ստանալու համար:
- 4) Սյունիքում և Արցախում որոշակի ժամանակով վերականգնվեց հայկական իշխանությունը:

23

VII դարի երկրորդ կեսի հայոց իշխաններին դասավորել ըստ կառավարման ժամանակագրական հաջորդականության.

- ա. Գրիգոր Մամիկոնյան
- բ. Աշոտ Բագրատունի
- գ. Ներսեհ Կամսարական
- դ. Սմբատ Բագրատունի
- ե. Համազասպ Մամիկոնյան

- 1) բ, ա, դ, ե, գ
- 2) ե, ա, բ, գ, դ
- 3) գ, բ, դ, ա, ե
- 4) ե, դ, բ, ա, գ

24

Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. ահաբեկչությունը ՀՀ Ազգային ժողովում
- բ. բազմակուսակցական համակարգի ձևավորման սկիզբը ՀՀ-ում
- գ. Ա. Գյուլի այցը ՀՀ՝ Հայաստան–Թուրքիա ֆուտբոլային խաղին
- դ. Գերմանիայի Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտումը
- ե. Թուրքիայի կողմից ՀՀ անկախության ճանաչումը
- զ. Հայաստանի անդամակցումը ՄԱԿ-ին

- 1) գ, գ, ա, ե, դ, բ
- 2) գ, գ, ե, ա, բ, դ
- 3) բ, գ, ա, ե, դ, գ
- 4) բ, ե, գ, ա, դ, գ

25

Համապատասխանեցնել.

Պատմական Հայաստանի ո՞ր գավառներում են տեղի ունեցել ներքոհիշյալ իրադարձությունները.

- | | |
|---|---------------|
| ա. Արիստակես կաթողիկոսի հուղարկավորությունը | 1) Նիգ |
| բ. Հայ եկեղեցու առաջին ժողովը | 2) Բագրևանդ |
| գ. Արշակունի թագավորների դամբարանների թալանը
պարսից զորքի կողմից | 3) Եկեղյաց |
| դ. Ձիրավի ճակատամարտը | 4) Տարոն |
| ե. Արշակավանի հիմնումը | 5) Կոզովիտ |
| | 6) Դարանաղյաց |

- 1) ա-1, բ-4, գ-3, դ-5, ե-2
- 2) ա-3, բ-4, գ-6, դ-5, ե-2
- 3) ա-1, բ-6, գ-3, դ-2, ե-5
- 4) ա-3, բ-4, գ-6, դ-2, ե-5

26

Կատարել համապատասխանեցում.

N	Որտեղի՞ ց էր ներգաղթը	N	Քանակը	N	Տարեթիվը
1	Իրաք (առաջին խումբ)	1	4167	1	1925 թ.
2	Կ. Պոլիս	2	3500	2	1921 թ.
3	Սիրիա, Հունաստան, Ֆրանսիա, Թուրքիա	3	5016	3	1922 թ.
4	Հունաստան, Իրաք, Թուրքիա և այլն	4	3000	4	1923 թ.
		5	10000	5	1924 թ.

- | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|--|----|----|----|---|---|---|---|---|---|---|---|---|--|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|--|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|--|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1) | 2) | 3) | 4) | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| <table border="1" style="border-collapse: collapse; text-align: center;"> <tr><td>1</td><td>4</td><td>2</td></tr> <tr><td>2</td><td>2</td><td>3</td></tr> <tr><td>3</td><td>1</td><td>5</td></tr> <tr><td>4</td><td>3</td><td>1</td></tr> </table> | 1 | 4 | 2 | 2 | 2 | 3 | 3 | 1 | 5 | 4 | 3 | 1 | <table border="1" style="border-collapse: collapse; text-align: center;"> <tr><td>1</td><td>3</td><td>1</td></tr> <tr><td>2</td><td>4</td><td>2</td></tr> <tr><td>3</td><td>5</td><td>3</td></tr> <tr><td>4</td><td>1</td><td>5</td></tr> </table> | 1 | 3 | 1 | 2 | 4 | 2 | 3 | 5 | 3 | 4 | 1 | 5 | <table border="1" style="border-collapse: collapse; text-align: center;"> <tr><td>1</td><td>2</td><td>3</td></tr> <tr><td>2</td><td>1</td><td>4</td></tr> <tr><td>3</td><td>4</td><td>2</td></tr> <tr><td>4</td><td>5</td><td>5</td></tr> </table> | 1 | 2 | 3 | 2 | 1 | 4 | 3 | 4 | 2 | 4 | 5 | 5 | <table border="1" style="border-collapse: collapse; text-align: center;"> <tr><td>1</td><td>3</td><td>4</td></tr> <tr><td>2</td><td>2</td><td>5</td></tr> <tr><td>3</td><td>5</td><td>1</td></tr> <tr><td>4</td><td>4</td><td>2</td></tr> </table> | 1 | 3 | 4 | 2 | 2 | 5 | 3 | 5 | 1 | 4 | 4 | 2 |
| 1 | 4 | 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | 2 | 3 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | 1 | 5 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | 3 | 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 3 | 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | 4 | 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | 5 | 3 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | 1 | 5 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | 1 | 4 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | 4 | 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | 5 | 5 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 3 | 4 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | 2 | 5 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | 5 | 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | 4 | 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

27 Որտե՞ղ էին գտնվում հայոց առաջնորդական աթոռները մինչ Գրիգոր Լուսավորչի կողմից Հայոց եկեղեցական նվիրապետության հաստատումը.

- 1) Եդեսիայում, Արտագում և Սյունիքում
- 2) Փոքր Հայքում, Սյունիքում, Արցախում
- 3) Մաժակ-Կեսարիայում, Արցախում և Սյունիքում
- 4) Ատրպատականում, Տարոնում, Մաժակ-Կեսարիայում

28 Պետական լեզվին չտիրապետող պաշտոնյաներին աշխատանքից ազատելու պայմանների մասին ՀՀ օրենքն ընդունվել է՝

- 1) 1920 թ. հունիսի 25-ին
- 2) 1920 թ. մայիսի 30-ին
- 3) 1919 թ. դեկտեմբերի 2-ին
- 4) 1919 թ. ապրիլի 15-ին

29 Ո՞ր թվականին է գոհվել Արաբոն.

- 1) 1891 թ.
- 2) 1893 թ.
- 3) 1895 թ.
- 4) 1892 թ.

30 Ո՞ր կայսեր ուղարկած զորքն են հայերը Տրդատ II-ի գլխավորությամբ ջախջախել և վտարել Հայաստանից.

- 1) Սեպտիմիոս Սևերոս
- 2) Ներոն
- 3) Կարակալլա
- 4) Մակրինոս

31 Կիլիկիայի ո՞ր մասն էր զբաղեցնում Դաշտային Կիլիկիան.

- 1) հարավարևմտյան
- 2) հյուսիսարևելյան
- 3) հարավարևելյան
- 4) հյուսիսարևմտյան

32

Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.

«Լեռնային Ղարաբաղը մշտնջենապես բնակեցված է եղել հայերով և նրանց հայրենիքի մի հատվածն է, որը, Ստալինի մեղքով հայտնվելով Ադրբեջանի կազմում, 65 տարի շարունակ ենթարկվել է ստորացման, վիրավորանքների ու ամեն տեսակի ճնշումների... Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչները... Ստեղծված իրավիճակի միակ ճշմարիտ լուծումը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի դուրսբերումը Ադրբեջանի կազմից»:

- 1) Ջորի Բալայան
- 2) Վաչե Սարուխանյան
- 3) Յակով Ջարուբյան
- 4) Հենրիխ Պողոսյան

33

Ո՞ւմ խոսքերն են մեջբերված.

«Մի տեսակ արտահոդային պետություն էր ստեղծվում՝ կենտրոնական և տեղական իշխանություններով: Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարման մեքենան արդեն պատրաստ էր»:

- 1) Անդրանիկ Օզանյանի
- 2) Արամ Մանուկյանի
- 3) Սիմոն Վրացյանի
- 4) Ստեփան Շահումյանի

34

Ինչպե՞ս էր կոչվում հայկական հելլենիզմի առաջին փուլը.

- 1) վաղ հելլենիստական ժամանակաշրջան
- 2) ուշ հելլենիստական ժամանակաշրջան
- 3) նախնական հելլենիստական ժամանակաշրջան
- 4) բուն հելլենիստական ժամանակաշրջան

35

Ի՞նչ նպատակով է շահ Աբասը թուրքական բանակի շարժման ճանապարհին ընկած հայկական բնակավայրերի բնակչությանը գաղթեցրել Պարսկաստանի խորքերը.

- ա. Դրանով թուրքական բանակը կգրկվեր պարենից ու օթևանի հնարավորությունից և ի վիճակի չէր լինի շարունակելու արշավանքը:
- բ. Հայ որակյալ երկրագործներին ու արհեստավորներին բնակեցնելով երկրի ներքին գավառներում՝ շահը հույս ուներ զարգացնելու Պարսկաստանի տնտեսությունը:
- գ. Պարսկաստանի սահմանամերձ շրջաններ տեղափոխված հայերը կգինվորագրվեին պարսկական բանակին և կկասեցնեին թուրքական զորքերի առաջխաղացումը:
- դ. Թուրքիայի համար այլևս իմաստ չէր ունենա ավերված շրջանների գրավումը, և թուրքական բանակը չէր շարունակի արշավանքը:
- ե. Հայ առևտրականներին փոխադրելով երկրի հարավ՝ նա ձգտում էր հյուսիսում զարգացած մետաքսի առևտուրը տեղափոխելու Պարսից ծոց, ինչը տնտեսական մեծ վնաս կհասցներ Օսմանյան պետությանը:

- 1) բ, գ, դ
- 2) ա, դ, ե
- 3) ա, բ, ե
- 4) ա, բ, դ

36

XIX դ. երկրորդ կեսի հայ քաղաքական կյանքի հետ կապված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. ՀՅԴ կուսակցության ստեղծումը
- բ. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծումը
- գ. Արմենական կուսակցության ստեղծումը
- դ. «Հայրենասերների միություն» կազմակերպության ստեղծումը
- ե. Հնչակյան կուսակցության ստեղծումը

- 1) բ, դ, գ, ե, ա
- 2) բ, դ, ա, ե, գ
- 3) ե, դ, ա, գ, բ
- 4) բ, դ, ա, գ, ե

37

Վանի թագավորության արքաների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.

- ա. Արգիշտի II
- բ. Ռուսա III
- գ. Իշպուինի
- դ. Էրիմենա
- ե. Արգիշտի I
- զ. Սարդուրի II

- 1) գ, ե, ա, զ, բ, դ
- 2) գ, ե, զ, ա, դ, բ
- 3) ե, զ, ա, գ, բ, դ
- 4) զ, գ, ե, ա, բ, դ

38

Համապատասխանեցնել հեղինակների և նրանց ստեղծագործությունների անունները.

- | | |
|-------------------------|----------------------|
| 1) Հովհաննես Այվազովսկի | ա. «Ջանգեզուր» |
| 2) Եղիշե Թադևոսյան | բ. «Նավերի բեռնումը» |
| 3) Գևորգ Բաշինջադյան | գ. «Արևածաղիկը» |
| 4) Վարդգես Սուրենյանց | դ. «Ս. Հռիփսիմե» |
| | ե. «Սալումե» |

- 1) 1–բ, 2–դ, 3–ա, 4–ե
- 2) 1–ա, 2–դ, 3–բ, 4–գ
- 3) 1–ե, 2–բ, 3–գ, 4–դ
- 4) 1–բ, 2–գ, 3–ա, 4–դ

39

Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.

- 1) Ռուսաստանի կազմում Շամախի կենտրոնով 1840 թ. ստեղծված վարչական միավորը կոչվում էր Կասպիական մարզ:
- 2) Արևելյան Հայաստանի տարածքում ռուսական իշխանությունների ստեղծած և 12 տարի գոյություն ունեցած վարչական միավորը կոչվում էր Հայկական մարզ:
- 3) Արցախում կազմավորված կիսանկախ իշխանությունները կոչվել են սղնախներ:
- 4) Ստորին Բասենի վարչական կենտրոն Հասան կալան ռուս մեծ գրող Ա. Պուշկինն անվանել է «Արգրումի (Էրգրում) բանալի»:
- 5) 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի օրերին մի խումբ հայ մտավորականների մշակած ազատագրական նախագծի համաձայն՝ ռուսական կայսր Նիկոլայ I–ը կրելու էր նաև «Հայոց թագավոր» տիտղոսը:

40

Գտնել սխալ պատասխանները:

Որո՞նք էին Հայաստանում բռնկված Փետրվարյան ապստամբության պատճառները.

- 1) դաշնակցություն կուսակցության և նախկին կառավարության անդամների բացահայտ քարոզչական և կազմակերպչական աշխատանքը՝ խորհրդային իշխանության հեղինակությունը վարկաբեկելու ուղղությամբ
- 2) 1921 թ. փետրվարին իրականացված նոր ձերբակալություններն ու գնդակահարությունները
- 3) օտարերկրյա կազմակերպությունների սադրիչ գործողությունները
- 4) ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը
- 5) բոլշևիկյան մենիշխանության հաստատումը

41

Տրված պնդումներից որո՞նք են սխալ.

- 1) Ըստ Աստվածաշնչի՝ բոլոր ազգերն առաջացել են Նոյ նահապետի երեք որդիներից՝ Հաբեթից, Սեմից, Քամից:
- 2) Հայկական ավանդության համաձայն՝ Հայկ նահապետի անունով մեր ժողովուրդը կոչվեց հայ, երկիրը՝ Հայք, Հայաստան, իսկ նրա ժառանգներից Արամ նահապետի անունից առաջացան Հայաստանի «Արմենիա» և հայերի «արմեն» անունները:
- 3) Միջնադարում հայկական ուժեղ պետություն է ստեղծվել Միջերկրական ծովի հյուսիս–արևմուտքում ընկած Կիլիկիայում, որն ունեցել է մինչև 50 000 քառ. կմ տարածք:
- 4) Հայկական ավանդության համաձայն՝ Արամանյակի անունով է կոչվել Արագած լեռը:
- 5) Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքի համաձայն՝ համաշխարհային ջրհեղեղից փրկվեց միայն Նոյ նահապետն՝ իր ընտանիքով, որի տապանը հանգրվանեց Հայկական լեռնաշխարհում՝ «Արարատ լեռների վրա»:
- 6) Հայոց ծագումնաբանության մասին բնիկ հայկական ավանդագրույցում որոշակիորեն առանձնանում է ժամանակագրական երեք շերտ՝ հնագույն, նախաքրիստոնեական և հետքրիստոնեական:

42

Իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Վախթանգ Գորգասալի գահակալության սկիզբը
- 2) Գյուտ կաթողիկոսի գահակալության սկիզբը
- 3) Հովսեփ Վայոցձորցու և Ղևոնդ Երեցի նահատակությունը
- 4) Պերոզի հրամանով Գյուտ կաթողիկոսի մեկնումը Տիգրան
- 5) Գյուտ կաթողիկոսի վերադարձը Տիգրանից և հաստատվելը Վանանդում
- 6) Ուրացյալ Վազգեն բղեշխի սպանությունը

43

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Ազիզ փաշայի զորքի հարձակումը Ջեյթունի վրա
- 2) Քյուրուկդարայի ճակատամարտը
- 3) Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովի կողմից Ազգային սահմանադրության (կանոնադրության) հաստատումը
- 4) Լոնդոնում ռուս-անգլիական համաձայնագրի կնքումը
- 5) Մկրտիչ Խրիմյանի՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք դառնալը

--	--	--	--	--

44

Կատարել համապատասխանեցում.

- ա. «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստի մշակումը և հրատարակումը
- բ. սինթետիկ կաուչուկի արտադրության հիմնադրումը
- գ. եռագույն հեռուստատեսության ստեղծումը
- դ. Բյուրականի աստղադիտարանի վերածումը աշխարհում աստղագիտության ոլորտի գիտահետազոտական խոշոր կենտրոնի
- ե. Մատենադարանի շենքի նախագծումը

- 1) Մանուկ Աբեղյան, Կարապետ Մելիք-Օհանջանյան
- 2) Մկրտիչ Ներսիսյան
- 3) Վիկտոր Համբարձումյան
- 4) Մարկ Գրիգորյան
- 5) Ստեփան Ղամբարյան, Լևոն Ռոտինյան
- 6) Հովհաննես Ադամյան

ա	
բ	
գ	
դ	
ե	

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:

- 1) Բեհիսթունյան արձանագրությունը գրված է երեք լեզուներով՝ էլամերեն, պարսկերեն, քարեղերեն:
- 2) Բեհիսթունյան արձանագրության էլամերեն բաժնում Հայաստանը կոչվում է Արմինա:
- 3) Կյուրոս Մեծի մահվանից անմիջապես հետո Աքեմենյան տերության մեջ սկսվեցին գահակալական կռիվներ, որոնք ավարտվեցին Դարեհ I-ի հաղթանակով:
- 4) Հայաստանի դեմ արշավանքը Դարեհ I-ը հանձնարարել էր նախ Դադարշիշին, ապա՝ Վահումիսային:
- 5) Միայն հինգերորդ արշավանքից հետո՝ Ք. ա. 522 թվականին է Հայաստանը ճանաչում Աքեմենյանների գերիշխանությունը:
- 6) Դարեհ I-ի դեմ Բաղդադում տեղի ունեցած ապստամբությունը ղեկավարել է հայազգի Արախան՝ Խալդիտայի որդին:

Բ մակարդակ

46 Ընտրել ճիշտ բացատրությունները.

- ա. Կոմիսներն ի բարձրագույն խորհրդի նախաձեռնությամբ Մոսկվայում կայացած խորհրդաժողովը Արևելքի ժողովուրդների առաջին համագումարն էր:
- բ. Թուրքիայում ծավալվող քեմալական շարժման նպատակները պաշտոնական ձևակերպումներ ստացան «Թուրքիայի հանրապետության ազգային միություն» կոչվող փաստաթղթում:
- գ. Իտալիայի Սան Ռեմո քաղաքում Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը մշակած մարմինը տերությունների Գերագույն խորհրդի խորհրդաժողովն էր:
- դ. Թալեաթի նախագահությամբ 1914 թ. հոկտեմբերին հրավիրված գաղտնի խորհրդակցությունում կազմավորված հատուկ մարմինը կոչվել է Երեքի գործադիր կոմիտե:
- ե. Փարիզում Պողոս Նուբարի նախաձեռնությամբ հրավիրված ժողովը Հայոց ազգային համագումարն էր:
- զ. Հաճնում Պետրոս Սարաճյանի նախագահությամբ քեմալականների դեմ հայերի պաշտպանական մարտերը գլխավորող մարմինը կոչվում էր ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդ:
- է. Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինին ուղղված Քեմալի նամակում Արևմուտքի տերություններն ու Հայաստանն անվանվում են «ժողովրդավարական երկրներ»:

- 1) դ, գ, է
- 2) ա, գ, ե, է
- 3) գ, դ, ե, գ
- 4) ա, բ, դ

47 Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|-------------------|--|
| 1) փերեզակ | ա. շահական նստավայր |
| 2) շահապ | բ. հարկահանությանը, առևտրին, շուկաներին, արհեստներին հետևող պաշտոնյա |
| 3) շահաստան | գ. մանրավաճառ առևտրական |
| 4) մուհթասիբ | դ. բուն քաղաք |
| 5) մարզպանություն | ե. քաղաքապետ |
| 6) գանձագին | զ. արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատար |
| 7) մաղխազ | է. վարչաքաղաքական միավոր |
| | ը. հողատիրության ձև |

- 1) 1-գ, 2-ե, 3-դ, 4-բ, 5-է, 6-ը, 7-զ
- 2) 1-ե, 2-բ, 3-գ, 4-ա, 5-է, 6-դ, 7-զ
- 3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-զ, 5-բ, 6-է, 7-ե
- 4) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-բ, 6-ը, 7-զ

Ստորև թվարկվածներից որո՞նք պատմական դեպքերի ու իրադարձությունների հետևանքներ չեն.

- ա) Կիմերների հարձակման հետևանքով Վանի թագավորությունը հայտնվեց երկու ճակատով հարձակվող թշնամիների օղակում:
 - բ) Ք. ա. VIII դ. վերջերին Ասորեստանը վերականգնեց դիրքերը՝ կրկին դառնալով Վանի տերության մրցակիցն Առաջավոր Ասիայում:
 - գ) Արտաշես I-ի միավորիչ գործունեության հետևանքով հայկական տարածքների մեծ մասը միավորվեց մեկ ընդհանուր պետության մեջ:
 - դ) Վանի թագավորության և սկյութների միջև հաստատված դաշնակցային հարաբերությունների հետևանքը վերջիններիս՝ Փոքր Ասիայի արևելքում հաստատվելն էր:
 - ե) Արտաշեսյանների արքայատոհմի անկման հետևանքով հայ բնակչության և իշխանների մի մասը ստիպված հեռացավ հայրենիքից:
 - զ) Արտաշես I-ի միավորիչ գործունեության հետևանքով հայկական բոլոր տարածքները, բացառությամբ Փոքր Հայքի, միավորվեցին մեկ միասնական պետության մեջ:
 - է) Լուկուլլոսի պարտության հետևանքով վերականգնվեց Հայկական տերության հեղինակությունը:
- 1) ա, գ, է
 - 2) ա, ե, է
 - 3) գ, դ, զ
 - 4) դ, ե, զ

Գտնել Հայաստանում ենթակա թագավորությունների առաջացման պատճառները.

- ա. Երկրի նշանավոր իշխանությունները տնտեսական և ռազմական բավարար հզորություն ունեին և անկախության էին ձգտում:
 - բ. Կենտրոնախույս ուժերին օժանդակում էր Արաբական խալիֆայությունը:
 - գ. Միջնադարյան քաղաքներն անկում էին ապրել և հանդես չէին գալիս որպես թագավորական իշխանության դաշնակից:
 - դ. Բագրատունիները կենտրոնացված և միասնական պետություն ստեղծելու ձգտում չէին ցուցաբերում:
 - ե. Բյուզանդիան հայոց պետությունը թուլացնելու քաղաքականություն էր վարում:
 - զ. Կենտրոնախույս ուժերին աջակցում էր հայոց կաթողիկոսությունը:
 - է. Հայ վաճառականությունը լիակատար աջակցություն էր ցույց տալիս երկրի մասնատման քաղաքականությանը:
 - ը. Արտաքին գործոնների պատճառով Հայաստանի տնտեսական զարգացումը չհանգեցրեց միասնական կենտրոնացված պետության ստեղծմանը:
 - թ. Բյուզանդիան գրավեց Հայաստանի արևմտյան ու հարավային շրջանները՝ ստեղծելով Բագրատունիներին հակադրվող հայկական իշխանություններ:
- 1) բ, գ, է, թ
 - 2) դ, ե, է, թ
 - 3) ա, բ, գ, ը
 - 4) ա, բ, է, ը

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. թուրքական զորքերի դեմ Պապիկ իշխանի զլխավորությամբ զեյթունցիների մղած կռիվների ավարտը
- բ. Հնչակյան կուսակցության պառակտումը երկու թևի
- գ. «Բազմավեպ» պարբերականի տպագրման սկիզբը
- դ. ՀՅԴ հռչակագրի հրատարակումը «Դրոշակ» թռուցիկ թերթում
- ե. «Հայաստան» անվան գործածության արգելումը Աբդուլ Համիդ II-ի կողմից
- զ. ՀՅԴ առաջին ծրագրի հրատարակումը «Դրոշակում»
- է. Հնչակյան կուսակցության ծրագրի հրատարակումը
- ը. Հնչակյան կուսակցության պաշտոնաթերթի հիմնադրումը
- թ. «Խարխախ» զինագործարանի հիմնադրումը
- ժ. ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովի հրավիրումը

- 1) գ, ա, ե, ը, է, դ, թ, ժ, զ, ք
- 2) ա, գ, ը, է, է, դ, ժ, զ, թ, ք
- 3) գ, է, ա, ը, է, թ, ժ, դ, ք, զ
- 4) ա, ը, թ, գ, է, է, դ, ժ, ք, զ

Թվարկված ճակատամարտերից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Ներսեհապատի
- բ. Քաղխախայի
- գ. Ճարմանայի
- դ. Խաղխաղի
- ե. Վարդանակերտի
- զ. Չիրավի
- է. Ավարայրի
- ը. Խաղամախայի
- թ. Ակոռիի
- ժ. Յարմուքի

- 1) թ
- 2) ք
- 3) է
- 4) ը

Հայկագուն–Երվանդունի տիրակալներից ո՞վ է գահակալել ութերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Արշամ
- բ. Երվանդ II
- գ. Երվանդ IV
- դ. Տիգրան Երվանդյան
- ե. Շամ (Սամոս)
- զ. Սկայորդի
- է. Երվանդ III
- ը. Վահագն
- թ. Պարույր
- ժ. Երվանդ Սակավակյաց

- 1) է
- 2) է
- 3) ք
- 4) ա

Թվերը համապատասխանեցնել փաստերին.

- | | |
|------------|---|
| ա. 148 | 1) պոլսահայության թվաքանակը XIX դ. 30–40–ական թթ. |
| բ. 45 000 | 2) Հալիձորի ճակատամարտում օսմանյան բանակի կորուստը |
| գ. 750 | 3) 1890–ական թթ. օսմանյան Թուրքիայում ոչնչացված հայեր |
| դ. 48 000 | 4) Հալիձորի ճակատամարտում թշնամուց իսլված դրոշների թիվը |
| ե. 300 000 | 5) Ջեյթունի ձորում ծուղակն ընկած թուրքական զորքի թիվը |
| զ. 30 000 | 6) Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո Արևելյան Հայաստանում վերաբնակված պարսկահայերի թիվը |
| է. 200 000 | 7) հայկական զորքերի քանակը Երվանդ Սակավակյացի օրոք |
| ը. 1036 | 8) 1909 թ. ապրիլին Ադանայի նահանգում սպանված հայեր |
| թ. 13 000 | 9) հայկական կողմի զոհերի թիվը Ավարայրի ճակատամարտում |
| ժ. 25 000 | 10) ԽՍՀՄ հերոսի կոչմանն արժանացած հայերի թիվը |
| | 11) 1988 թ. Սպիտակի երկրաշարժի զոհերի թիվը |

- 1) ա–2, բ–3, գ–10, դ–9, ե–11, զ–4, է–5, ը–1, թ–6, ժ–8
- 2) ա–4, բ–6, գ–5, դ–7, ե–3, զ–8, է–1, ը–9, թ–2, ժ–11
- 3) ա–3, բ–4, գ–10, դ–6, ե–8, զ–1, է–2, ը–7, թ–5, ժ–9
- 4) ա–4, բ–6, գ–5, դ–7, ե–3, զ–9, է–1, ը–2, թ–10, ժ–11

Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Ըստ ՀՀ Սահմանադրության՝ պետության ղեկավարը հանրապետության նախագահն է, ով ընտրվում է չորս տարի ժամկետով, ոչ ավել, քան երեք անգամ անընդմեջ:
 - բ. Մինչև նոր Սահմանադրության ընդունումը ՀՀ–ում շարունակում էին գործել ՀԽՍՀ Սահմանադրության այն դրույթները, որոնք հակասում էին Անկախության հռչակագրի հիման վրա ստեղծված օրենքներին:
 - գ. ՀՀ Սահմանադրությամբ հռչակվում էր, որ պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը:
 - դ. ՀՀ Սահմանադրությամբ բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Ազգային ժողովը, վերանվանվեց Գերագույն խորհուրդ:
 - ե. ՀՀ շուրջ չորս տասնյակի հասնող շրջանները միավորվեցին՝ ստեղծելով 10 մարզեր:
 - զ. ՀՀ սահմանադրական փոփոխություններով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը դարձավ չորս տարի:
 - է. ՀՀ սահմանադրական փոփոխությունների վերջնական տարբերակը հաստատվեց Ազգային ժողովի կողմից:
- 1) գ, է, զ
 - 2) բ, դ, զ
 - 3) ա, գ, է
 - 4) գ, է, է

55

Ընտրել երեք պնդումները, որոնք արտացոլում են Կիլիկյան Հայաստանի պետական կարգի բնութագրական կողմերը և առանձնահատկությունները.

- ա. Կիլիկյան Հայաստանում սենեսկալը հետևում էր նաև արքունի կարգ ու կանոնի պահպանմանը:
- բ. Պայլը Կիլիկյան Հայաստանի թագավորի մանկահասակության դեպքում իրականացնում էր ոչ միայն նրա, այլև ամբողջ երկրի խնամակալությունը:
- գ. Կիլիկյան Հայաստանում թագադիր գործակալն էր լուծում գահաժառանգության խնդիրը:
- դ. Կիլիկյան Հայաստանում արքունիքի մեջ մտնում էին արքունի խորհուրդը, բարձրագույն դատական ատյանը և գործակալությունները:
- ե. Կիլիկյան Հայաստանում կանցլերը թագավորի առաջին խորհրդականն էր:
- զ. Կիլիկյան Հայաստանում թագադիր գործակալությունը ստեղծվել էր դեռևս Ռուբինյան առաջին իշխանների օրոք:
- է. Կիլիկյան Հայաստանում կանցլերը ղեկավարում էր օտար երկրների ներկայացուցիչների հետ բանակցությունները:

- 1) ա, գ, է
- 2) բ, դ, է
- 3) ա, գ, զ
- 4) բ, դ, է

56

Թվարկվածներից որո՞նք 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի հետևանքներից չեն.

- ա. Հերոսամարտերի շնորհիվ բնաջնջումից փրկվեց արևելահայությունը, ինչպես և Եդեռնից մազապուրծ հարյուր հազարավոր արևմտահայեր:
- բ. Հերոսամարտերից հետո թուրքական զորքերը սրբնթաց առաջ շարժվեցին և գրավեցին Թիֆլիսը:
- գ. Հայկական ուժերի ռազմական հաջող գործողություններն ստիպեցին թուրքական կողմին Բաթումի բանակցություններում մեղմացնել իրենց պահանջները:
- դ. Թուրքիան ստիպված էր նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետ 1918 թ. հունիսի 4-ին կնքել հաշտության պայմանագիր:
- ե. Հերոսամարտերից հետո հայությունը չկարողացավ ազգովին ինքնակազմակերպվել:
- զ. Ճակատամարտերը հնարավորություն տվեցին թուրքական զորքերին առանց դիմադրության գրավելու Բաքուն:
- է. Հերոսամարտերով դրվեց ամբողջական հայրենիքի վերականգնման ճանապարհի սկիզբը:

- 1) ա, գ, է
- 2) բ, դ, է
- 3) բ, է, զ
- 4) գ, դ, է

Կատարել պատմական իրադարձությունների և տարեթվերի համապատասխանեցում.

- | | |
|---|----------------|
| ա) Հռոմի հարձակումը Հայաստանի վրա և հայոց գահին բազմելը | 1) 51 թ. |
| բ) Վաղարշ I Արշակունու գահակալումը Պարթևստանում | 2) 298 թ. |
| գ) Կորբուլոնի ներխուժումը Մեծ Հայք | 3) 276 թ. |
| դ) Հռանդեայի պայմանագրի կնքումը | 4) 66–88 թթ. |
| ե) Տրդատ I-ի գահակալումը | 5) 226 թ. |
| զ) Սասանյանների հաստատումը պարսից գահին | 6) 51–80 թթ. |
| է) Խոսրով II-ի որդի Տրդատի մենամարտը գոթական իշխանի հետ | 7) 297 թ. |
| ը) Ոսիայի ճակատամարտը | 8) 64 թ. |
| թ) Մծբինի պայմանագրի կնքումը | 9) 58 թ. |
| | 10) 88–110 թթ. |

- 1) ա–1, բ–6, գ–9, դ–8, ե–4, զ–5, է–3, ը–7, թ–2
- 2) ա–9, բ–4, գ–1, դ–8, ե–10, զ–3, է–7, ը–5, թ–2
- 3) ա–1, բ–6, գ–9, դ–8, ե–10, զ–2, է–3, ը–5, թ–7
- 4) ա–8, բ–10, գ–1, դ–9, ե–4, զ–7, է–5, ը–2, թ–3

Ընտրել ճիշտ պնդումները.

- ա. Հայոց դիցարաններում չեն եղել չար կամ չարագործ աստվածներ, իսկ չար ուժերը ոգիների մակարդակից վեր չեն բարձրացվել:
- բ. Միայն Վանի թագավորության շրջանի դիցարանին է բնորոշ եղել միակենտրոնությունը՝ Արարիչ գերագույն աստծո գլխավորությամբ:
- գ. Հելլենիզմի դարաշրջանի հայոց դիցարանում թեև եղել են չար կամ չարագործ աստվածություններ, սակայն միշտ մեծարվել են գիտությունները, արվեստներն ու ընտանիքը:
- դ. Հայոց դիցարաններին միշտ բնորոշ է եղել միակենտրոնությունը՝ Արարիչ գերագույն աստծո գլխավորությամբ, սակայն հայոց դիցարանները ղեկավարվում էին աստվածների գերագույն եռյակի կողմից:
- ե. Հայոց դիցարանները, ի տարբերություն հունական և հռոմեական դիցարանների, բաղկացած չէին ազգակից աստվածներից, այսինքն՝ չէին ներկայանում իբրև աստվածային ընտանիք:
- զ. Հայոց դիցարաններում չեն եղել չար կամ չարագործ աստվածներ, ընդհակառակը՝ միշտ մեծարվել են բարին, լույսը, ընտանիքը, գիտություններն ու արվեստները:
- է. Հայոց դիցարաններին միշտ բնորոշ է եղել երկմիասնականությունը, բոլոր հայկական դիցարանները ղեկավարվել են աստվածների գերագույն երկյակի կողմից:

- 1) ա, գ, է
- 2) դ, գ, է
- 3) ա, դ, գ
- 4) բ, դ, գ

Տրվածներից ո՞ր երեքը Հովսեփ Արղությանի և Հովհաննես Լազարյանի կազմած՝ Հայաստանի ազատագրման և հայ-ռուսական դաշնագրի նախագծին վերաբերող կետերից չեն.

- ա. Կասպից ծովի ափին Հայաստանին տրամադվելու էր նավահանգիստ:
 - բ. Հայաստանում լինելու էր որոշակի քանակությամբ ռուսական զորք՝ երկիրը հնարավոր հարձակումներից պաշտպանելու համար:
 - գ. Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմվելու էր 25-հազարանոց բանակ, որից 10 հազարը պետք է մտներ Վրաստան:
 - դ. Հայոց թագավորն ընտրվելու էր ռուսաց կայսրի կողմից, որն այնուհետև օծվելու էր Էջմիածնում:
 - ե. Նախկին հողատերերին վերադարձվելու էին իրենց կալվածքները, սակայն առանց գյուղացիներին ճորտացնելու իրավունքի:
 - զ. Ջորաջոկատների հրամանատարը լինելու էր հայազգի և ենթարկվելու էր ռուսական հրամանատարությանը:
 - է. Հայաստանն ազատագրելուց հետո ստեղծվելու էր հայկական պետություն, և Արցախի մելիքներից մեկը դառնալու էր Հայաստանի թագավոր:
- 1) ա, դ, ե
 - 2) գ, դ, զ
 - 3) ա, բ, է
 - 4) գ, զ, է

Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.

- 1) Հայաստանի խորհրդայնացումից հետո երկրում ձևավորված գործադիր իշխանության նոր մարմինները կոչվում էին ժողովրդական կոմիսարիատներ:
- 2) Հայ-ռուսական երևանյան բանակցությունների ավարտին ստորագրված փաստաթուղթը կոչվում էր «Եզրափակիչ արձանագրություն»:
- 3) Դրոյի և ՌՄԴԽՀ կոմիսար Օ. Սիլինի 1920 թ. դեկտեմբերի 2-ին ստորագրած հրամանը կրում էր «Հայաստանը դաշնային խորհրդային հանրապետության մաս հայտարարելու մասին» վերնագիրը:
- 4) Հայաստանի Ռեզոլուցիոն նախագահ Ս. Կասյանի 1920 թ. դեկտեմբերի 6-ի դեկրետով հիմնված մարմինը, որը պետք է նպաստեր երկրում խորհրդային կարգեր «ներդնելուն», կոչվեց Արտակարգ հանձնաժողով:
- 5) «Թուրքական ազգային ուխտ» կոչվող փաստաթղթով Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան, Կարսը և Արդահանը հռչակվում էին «բուն հայկական տարածքներ»:
- 6) Միմոն Վրացյանի գլխավորած ՀՀ վերջին կառավարության անդամների մի մասը համարվում էին «բոլշևիկյան կողմնորոշման ջատագովներ»:
- 7) Արցախը Հայաստանի առաջին հանրապետության անբաժանելի մաս հռչակված մարմինը Արցախահայության 9-րդ համագումարն էր:

61

Թվարկվածներից որո՞նք Հայոց մեծ եղեռնի պատճառ չեն.

- 1) Միացյալ և անկախ Հայաստան ստեղծելու հայերի փորձերի խափանումը ռուսների կողմից
- 2) Հայկական հարցին մեկընդմիջտ վերջ տալու երիտթուրքերի ձգտումը
- 3) հայ քաղաքական կուսակցությունների՝ Հայաստանի միավորման ծրագրի ձախողումը
- 4) Եվրոպայից Թուրքիայի դուրս մղվելը և նոր հայրենիքի ստեղծումը
- 5) Անտանտին Անդրկովկասում հավատարիմ դաշնակցից զրկելը
- 6) հայության ֆինանսական և նյութական ունեցվածքին տիրանալը
- 7) հայ արդյունաբերողների և դրամատերերի մրցակցությունից ազատվելը

62

Թվարկվածներից որո՞նք են Կիլիկիայի հայերի և մոնղոլների միջև դաշինքի կնքման պատճառ հանդիսացել.

- 1) Մոնղոլները ձգտում էին շահելու քրիստոնյա հայերի համակրանքը, որովհետև Կիլիկյան Հայաստանը ռազմաքաղաքական դաշինքի մեջ էր գտնվում Ֆրանսիայի և Անգլիայի հետ:
- 2) Մոնղոլները խոստացան հայերին վերադարձնել մահմեդականների իլաժ տարածքները և օգնություն ցույց տալ Իկոնիայի սելջուկների հարձակումների ժամանակ:
- 3) Հայերն արդեն մոնղոլների հետ դաշինքի հարուստ փորձ էին ձեռք բերել բուն Հայաստանում և կարողացել էին խուսափել աղետից:
- 4) Մոնղոլները ծրագրել էին գրավել Ասորիքը և Պաղեստինը, ուստի վստահելի դաշնակցի կարիք ունեին, որպիսին կարող էր լինել Կիլիկյան Հայաստանը:
- 5) Մոնղոլները խոստացան պահպանել Կիլիկյան Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
- 6) Կիլիկյան Հայաստանը կարող էր օգնել մոնղոլներին ծովով եվրոպական երկրներ արշավանքներ իրականացնելիս:
- 7) Հայերը խոստացան մոնղոլներին հանձնել վանքերի և եկեղեցիների կուտակած հարստությունները:

Ընտրել սխալ փաստարկները.

- 1) 1826 թ. սեպտեմբերի սկզբներին հայազգի գեներալ Վալերիան Մադաթովի գորագունդը հետ է գրավում Գանձակը:
- 2) 1829 թ. հունիսի 24-ին Ի. Պասկևիչի գլխավորած ռուսական հիմնական ուժերը գրավում են Հասան կալան:
- 3) 1894 թ. «Դրոշակում» տպագրվել է ՀՅԴ ծրագիրը:
- 4) 1918 թ. ապրիլի 11-ից հունիսի 4-ը Անդրկովկասի իշխանությունները Բաթումում հաշտության բանակցություններ են վարել թուրքերի հետ:
- 5) 1918 թ. ապրիլի 6-8-ը Ալեքսանդրապոլում տեղի է ունեցել հայ ազգային-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն:
- 6) 1918 թ. մայիսի 16-27-ը Ղարափիլիսայում հայկական ուժերը հաղթական կռիվներ են մղել թուրքերի դեմ:
- 7) 1827 թ. Գալուստ Շերմազանյանը թատերական շենքի վերածած իր երկհարկանի տանը բեմադրել է հայ և օտար դրամատուրգների պիեսներ:
- 8) 1918 թ. մարտի 1-ից ապրիլի 1-ը Տրապիզոնում Անդրկովկասյան Սեյմի և Թուրքիայի միջև ընթացել են բանակցություններ:

Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.

- 1) Հռոմում ստեղծված Առաջին եռապետության անդամներն էին Գնեոս Պոմպեոսը, Հուլիոս Կեսարը, Մարկոս Անտոնիոսը:
- 2) Ք. ա. 54 թ. վերջերին Արտաշատում կնքվեց հայ-պարթևական դաշինք:
- 3) Ք. ա. 53 թ. գարնանը հռոմեական 50-հազարանոց բանակը Կրասոսի գլխավորությամբ ժամանեց Ասորիք:
- 4) Ք. ա. 53 թ. մայիսի 6-ին Խառան քաղաքից ոչ հեռու տեղի ունեցած ճակատամարտում պարթև արքայազն Բակուրը ջախջախեց հռոմեական բանակը:
- 5) Ք. ա. 5 թ. Օկտավիանոս Օգոստոսը մեծ բանակով Հայաստան է ուղարկում իր որդեգիր Գայոս Կեսարին, որը Հայաստանի թագավոր է հռչակում Տիգրան IV-ի հորեղբայր Արտավազդ III-ին:
- 6) Եռապետ Անտոնիոսը 60-հազարանոց բանակով Ք. ա. 36 թ. արշավեց Հայաստան և շարժվեց դեպի Արտաշատ:
- 7) Ք. ա. 3 թվականին Հայոց գահին կրկին բազմեց Տիգրան IV-ը:
- 8) Օկտավիանոսը Ք. ա. 27 թ. պաշտոնապես իրեն հայտարարեց Օգոստոս (Սրբազան) և հիմք դրեց կայսերական վարչակարգին Հռոմում:

65 Ո՞ր երկու իրադարձություններն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Հայոց կաթողիկոսական աթոռի փոխադրումը Հռոմկլա
- 2) Մլեհի կողմից Մսիս, Տարսոն և Ադանա քաղաքների ազատագրումը բյուզանդացիներից
- 3) Միրիոկեֆալոնի ճակատամարտը
- 4) Թորոս II-ի կողմից բյուզանդական զորքերի ջախջախումը Մսիս քաղաքի մոտ
- 5) Խաչակրաց երրորդ արշավանքի սկիզբը
- 6) Լևոն II-ի և Բոհեմունդի միջև հաշտության պայմանագրի կնքումը Սսում
- 7) Երուսաղեմի գրավումը Սալահ ադ Դինի կողմից
- 8) Լևոն Մեծագործի հանդիսավոր թագադրությունը
- 9) Լևոն Մեծագործի կողմից Լամբրոն ամրոցի գրավումը

66 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Մծուրքի հիմնադրումը
- 2) Փրասպայի մոտ հռոմեական զորքի պարտությունը
- 3) Արեգ-Միհրի տաճարի կառուցումը Գառնիում
- 4) Հայաստանում հունարեն այբուբենի կիրառման սկիզբը
- 5) Փոքր Հայքի ռազմակալումը Պոնտոսի կողմից
- 6) Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ պահլավերենի (միջին պարսկերեն) գործածման սկիզբը

--	--	--	--	--	--

67 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Խորհրդային Հայաստանում պարենհարկ մտցնելը
- 2) «Լեոնահայաստանի» հռչակումը
- 3) Երևանում հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումը
- 4) Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարի հրավիրումը Բաքվում
- 5) հայ ժողովրդի անունից Ա. Մյասնիկյանի շնորհակալական բաց նամակը ԱՄՆ նախագահ Ու. Հարդինգին
- 6) Հայհեղկոմի վերակազմավորվելը ՀՄԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի

--	--	--	--	--	--

Ստեղծագործությունների անվանումները համապատասխանեցնել հեղինակների անուններին.

- | | |
|-------------------------|---|
| ա. Անտոն Գարագաշյան | 1) «Համառօտ պատմութիւն Ադուանից» |
| բ. Աբրահամ Երևանցի | 2) «Գիրք պատմութեանց» |
| գ. Մաղաքիա Օրմանյան | 3) «Ազգապատում» |
| դ. Առաքել Դավրիժեցի | 4) «Պատմութիւն պատերազմաց» |
| ե. Նիկողայոս Ադոնց | 5) «Քննական պատմություն հայոց» |
| զ. Եսայի Հասան-Ջալալյան | 6) «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» |
| | 7) «Հայոց պատմություն» |

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.

- | |
|---|
| ա. Աղթամար կղզուց կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Արգինա |
| բ. Բազարան քաղաքում Աշոտ Բագրատունու օծումը հայոց թագավոր |
| գ. Ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը Էջմիածնում |
| դ. գաղտնի խորհրդաժողովի հրավիրումը Էջմիածնում և նրա գլխավորությամբ պատվիրակության մեկնումը Եվրոպա |
| ե. Սսի և Ադանայի XIV դ. սկզբների ժողովների որոշումների չեղյալ հայտարարելը |
| զ. Տարսոն քաղաքում Լևոն իշխանի օծումը հայոց թագավոր |

- 1) Մեսրոպ Արտազեցի
- 2) Անանիա Մոկացի
- 3) Գրիգոր Զ Ապիրատ
- 4) Ստեփանոս Սալմաստեցի
- 5) Գևորգ Գառնեցի
- 6) Հովհաննես Բ Գաբեղենացի
- 7) Կիրակոս Վիրապեցի

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:

- 1) Ի տարբերություն Արևմուտքի զարգացած երկրների՝ Խորհրդային Միության արդյունաբերացումն սկսվեց թեթև և սննդի արդյունաբերություններից:
- 2) ՀՅԴ ինքնավերացման համագումարից անմիջապես հետո Խորհրդային Հայաստանում լուծարվեցին դաշնակցության ընդհատակյա կառույցները:
- 3) ԽՍՀՄ-ում հնգամյակներով կենտրոնացված պլանավորումն իրականացվել է միայն Ստալինի և Խրուշչովի կառավարման շրջանում:
- 4) Հայոց եկեղեցու դեմ պայքարն ավելի սաստկացավ համատարած կոլեկտիվացման տարիներին. հոգևորականությունը դիտվեց որպես հեղափոխական և խորհրդամետ տարր:
- 5) Երևանի կոմերիտական կազմակերպության շարքերում գոյություն ուներ տրոցկիստական երկու խումբ, որոնք իրենց անվանում էին «Երիտասարդության տրոցկիստական միություն» և «Ուղղափառ մարքսիստներ»:
- 6) Արդյունաբերացման նպատակը ԽՍՀՄ-ը մեքենաներ և սարքավորումներ ներմուծող երկրից դրանք արտադրող երկրի վերածելն էր: